ՀՊՏՀ գիտական խորհրդի 04.05.2016 թ.
ՈՐՈՇՈՒՄԸ
«Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները»
հարցի վերաբերյալ

Լսելով և քննարկելով գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Վարդանյանի «Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները» խորագրով զեկուցումը, ինչպես նաև գիտխորհրդի անդամների ելույթները՝

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, որպես Հայաստանի առաջատար բուհերից մեկը, համաշխարհային կրթական և գիտական հանրության մասն է կազմում: Համալսարանի հետագա զարգացումը պայմանավորված է միջազգային շփումների ընդլայնմամբ և ամրապնդմամբ, արտասահմանյան համալսարանների, գիտական կազմակերպությունների, արդյունաբերական ձեռնարկությունների, ընկերակցությունների գործընկերների հետ ամուր ու տևական հարաբերությունների հաստատմամբ:

ՀՀ կառավարությունը, կրթության և գիտության նախարարությունը հայկական համալսարանների միջազգային միասնացման խնդիրը համարում են գերակա: Բուհերի միջազգային գործունեության ցուցանիշները ներառված են նրանց ընդհանուր գործունեության գնահատման բոլոր համակարգերում:

2015-2016 թվականներին համալսարանում ձեռնարկվել են քայլեր միջազգային գործունեության ցուցանիշների բարելավման ուղղությամբ: Կնքվել է 17 պայմանագիր եվրոպական համալսարանների և այլ կազմակերպությունների հետ: Վերջին երկու տարում համալսարան է այցելել 12 արտասահմանյան պատվիրակություն, կայացել են համալսարանի ներկայացուցիչների 35 պաշտոնական այցելություններ արտասահմանյան բուհեր և կազմակերպություններ: 2015-2016 թվականներին համալսարանի 40-ից ավելի աշխատակիցներ այցելել են արտասահմանյան համալսարաններ:

Միջազգային շփումների աշխարհագրությունը ներառում է 19 երկիր (Ֆիլիպիններ, Ուկրաինա, Ինդոնեզիա, Ճապոնիա, Հնդկաստան, Սիրիա, Չինաստան, Սլովենիա, Լեհաստան, Հունաստան, Հունգարիա, Ռումինիա, Ռուսաստան, Խորվաթիա, Էստոնիա, Բելառուս, Շվեյցարիա, Ավստրիա, Սլովակիա)՝ ընդգրկելով 28 համալսարան:

Համալսարանում անցկացվում են սեմինարներ և գիտաժողովներ միջազգային մասնակցությամբ: Արտասահմանյան հեղինակների գիտական հոդվածները հրապա-

րակվում են «Բանբեր ՀՊՏՀ» հանդեսում: Աշխատակիցների գիտական հոդվածների ընդհանուր քանակի 12%-ից ավելին տպագրվում է միջազգային ամսագրերում:

Կրթական ծառայությունների արտահանման նպատակով, 2015-2016 ուսումնական տարում համալսարանում օտարերկրյա քաղաքացիների ներգրավման ուղղությամբ, Հնդկաստանի Հանրապետությունում իրականացվել են գովազդային քարոզարշավ և ուսանողների հավաքագրում: Նույն ուսումնական տարում համալսարանի կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար կառավարում» մասնագիտացմամբ ուսումնառում են Սիրիայի Արաբական Հանրապետության 1 և Հնդկաստանի Հանրապետության 6 քաղաքացիներ: Նշված ժամանակահատվածում կրթական ծառայությունների արտահանումից ստացված եկամուտը կազմել է 5.959.800 ՀՀ դրամ (12.600 ԱՄՆ դոլար): 2014-2015 ուսումնական տարում կառավարման ֆակուլտետի «Գործարար կառավարում» մասնագիտացման մագիստրատուրան ավարտել է Սիրիայի Արաբական Հանրապետության 3 քաղաքացի: 2014 թ. արտասահմանցի ուսանողների բաժնեմասը կազմել է 0.04%, իսկ 2015 թ.՝ 0.1%:

2016 թվականից, «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում, իրականացվում են մեծածավալ ակադեմիական փոխանակումներ եվրոպական 10 համալսարանների միջև: 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում եվրոպական համալսարաններում ուսանելու է մեկնել 15 ուսանող, դասավանդման նպատակով՝ 7 դասախոս, փորձի փոխանակման և հետագա պայմանավորվածությունների ձեռքբերման համար՝ 3 աշխատող: 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում ՀՊՏՀ-ից կմեկնեն 4 դասախոս, 1 ասպիրանտ, 2 մագիստրոս, այդ թվում՝ 1 մագիստրոս Գյումրու մասնաճյուղից, կհյուրընկալվեն 2 մագիստրոս, 4 դասախոս: Նշված ծրագրի շրջանակներում Ռումինիայի Սուչավա քաղաքի Շտեֆան Չելմարեի համալսարանում դասախոսություններ է կարդացել պրոֆեսոր Վարդան Սարգսյանը:

«Ֆուլբրայթ» կրթաթոշակային ծրագրի շրջանակներում 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ՀՊՏՀ-ում հյուրընկալվել է ԱՄՆ-ի Մարքուեթի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դասախոս Փիտր Թումանոֆը, ով, բացի արտասահմանցի ուսանողներին դասավանդելուց, դասախոսություններ է կարդացել ՀՊՏՀ, ինչպես նաև Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ուսանողների, վարպետաց դասեր է անցկացրել դասախոսների համար:

Դասախոսություններով հանդես են եկել ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեիսինը և ՀՀ-ում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլուն, ՀՀ-ում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սուրեշ Բաբու Թադիպանեն:

Դասախոսություններով հանդես են եկել Արժույթի միջազգային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Տերեսա Դարան Սանչեզը, Եվրասիական տնտեսական հանձ-

նաժողովի մաքսային համագործակցության գծով կոլեգիայի անդամ (նախարար) Վլադիմիր Գոշինը, նույն հանձնաժողովի էներգետիկայի և ենթակառուցվածքների գծով անդամ (նախարար) Դանիել Իբրաևը, Վարշավայի համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, Եվրոպական պահպանողականների և բարեփոխիչների խմբի բյուրոյի անդամ Կարոլ Կարսկին:

Համալսարանում հյուրընկալվել են նաև Գերմանիայի ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) տեղեկատվական կենտրոնի տնօրեն Սիլվա Շմիդը, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Անահիտ Սիմոնյանը:

«Տեմպուս» ծրագրի շրջանակներում արտասահմանյան համալսարաններ են այցելել ՀՊՏՀ 35, արտասահմանյան համալսարաններից ՀՊՏՀ-ում հյուրընկալվել են 23 աշխատակիցներ:

2015 թ. ՀՊՏՀ-ն ընդգրկվել է համալսարանական ընկերակցությունում, ինչը հնարավորություն է ընձեռել Վիզեգրադի հիմնադրամի աջակցությամբ մասնակցելու միջհամալսարանական համացանցային պորտալի ստեղծմանը, որի նպատակն է համալսարանների գիտական և ակադեմիական գործունեության միջազգայնացումը, «Էրասմուս+» և «Հորիզոն 2020» ծրագրերին մասնակցության համար գործընկերների ավելի արդյունավետ որոնումը: 2015 թվականի ընթացքում համալսարանը գրանցվել է համաշխարհային վարկանիշային կայքերում, այդ թվում՝ www.webometrics.info/, www.topuniversities.com/, www.4icu.org/:

Համալսարանի աշխատողները մասնակցել են միջազգային մի շարք գիտաժողովների և սեմինարների:

Գիտական խորհուրդը նշում է համալսարանի միջազգային գործունեությանը վերաբերող հետևյալ խնդիրները.

1. Այս ոլորտում հիմնական ցուցանիշները դեռևս ցածր մակարդակում են:
2. Արտասահմանյան գործընկերների որոշ մասի հետ հաստատված հարաբերությունների արդյունավետության աստիճանը ցածր է: Երբեմն պայմանագրերը և համաձայնագրերն ամրագրվում են թղթի վրա՝ չապահովելով իրական հատույց:
3. Համալսարանի ստորաբաժանումները բավարար ակտիվությամբ չեն օգտագործում արտասահմանյան գիտնականների հետ համատեղ գիտական հետազոտությունների կատարման հնարավորությունը:
4. Փոքրաթիվ են արտասահմանյան հրատարակություններում համալսարանի գիտնականների հրապարակումները:
5. «Ամբերդ» հետազոտական կենտրոնի և գիտական խմբերի հետազոտությունների արդյունքների՝ հիմնականում հայերեն լեզվով հրապարակումները

խոչընդոտում են միջազգային գիտական հանրությանը համալսարանի գիտական ներուժի ներկայացմանը:

6. Գործնականում չիրացված կարելի է համարել կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրումը և հավաստագրումը:
7. Չնայած 2016 թվականին համալսարանի և արտասահմանյան բուհերի միջև ակադեմիական փոխանակումների աննախադեպ աշխուժացմանը, այդուհանդերձ, դրանց ծավալները դեռևս մեծ չեն:
8. 2016 թվականին, «Էրասմուս+» ծրագրի շրջանակներում, եվրոպական համալսարաններում ՀՊՏՀ բակալավրիատի ուսանողների ուսումնառությունը կազմակերպելու ընթացքում բացահայտվեցին կրթական ծրագրերի անհամադրելիության և 2-րդ, 3-րդ կուրսերում ուսումնական պլաններով նախատեսված մի շարք առարկաների դասավանդման հիմքերի բացակայության փաստեր: Այդ պատճառով փոխանակման ընթացքում մեր ուսանողների՝ նախապես հայտարարված առարկաների մեծ մասը փոխարինվեց տվյալ մասնագիտությանն առնչվող այլ առարկաներով, ինչն առաջացրեց մեծ թվով առարկայական տարբերությունների հանձնման անհրաժեշտություն՝ ֆինանսական լրացուցիչ պարտավորություններով (500-600 եվրո) հանդերձ (այն դեպքում, երբ «Էրասմուս+» ծրագրով մեկ ուսանողի ֆինանսավորումը, միջին հաշվով, կազմում է շուրջ 4 հազար եվրո):
9. Համալսարանում սովորող արտասահմանցի ուսանողների քանակն աճում է դանդաղ տեմպերով: Չնայած որոշակի առաջընթացին, այդուհանդերձ, դա նշանակալիորեն ցածր է միջազգային ոլորտում ընդունված միջին՝ 4-5% ցուցանիշից:
10. Համալսարանի դասախոսների և վարչական աշխատողների՝ օտար լեզուների պատրաստվածության անբավարար մակարդակը դառնում է ոչ միայն միջազգային շփումների զարգացումը զսպող գործոն, այլև նվազեցնում է համալսարանի գրավչությունն արտասահմանցի ուսանողների համար, որոշակի դժվարություններ ստեղծում աշխատողների հետ առկա ուսանողների լիարժեք շփումների համար:
11. Ըստ միջազգային գործունեության ուղղությունների՝ դեռևս առկա են որոշակի անելիքներ համալսարանի մասնաճյուղերում:
12. Համալսարանը չի դիրքավորվում որոշ կարևոր միջազգային աստիճանակարգերում:

Վերոնշյալի հիման վրա՝

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաշվի առնելով նշված խնդիրները՝ համալսարանի միջազգային գործունեության բնագավառում կատարված աշխատանքը համարել բավարար:
2. Հանձնարարել պրոռեկտոր **Գ. Ի. Վարդանյանին**.

2.1. մշակել և գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել համալսարանի միջազգայնացման 2016-2021 թթ. ռազմավարական ծրագիրը.

2.2. մինչև 01.09.2016 թ. ընկած ժամանակաշրջանում իրականացնել գործող միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի աուդիտ՝ դրանց կատարման արդյունավետության բարձրացման նպատակով, մշակել 2016-2017 թթ. նոր պայմանագրեր և համաձայնագրեր կնքելու պլան.

2.3. ձեռնարկել միջոցներ արտասահմանցի ուսանողների քանակի ավելացման ուղղությամբ և ապահովել մշտական հսկողություն ուսուցման որակի նկատմամբ.

2.4. շարունակել ընդլայնել դասախոսների և ուսանողների միջազգային ակադեմիական շարժունության աշխարհագրությունն ու ծավալը, ամրապնդել դասախոսների, վարչական աշխատողների և ուսանողների փոխանակման ծրագրերի շրջանակներում արտասահմանյան բուհերի հետ հաստատված հարաբերությունները.

2.5. մինչև 01.09.2016 թ. ընկած ժամանակահատվածում ներկայացնել առաջարկություն դասախոսների, գիտաշխատողների և վարչական կազմի՝ օտար լեզվի (անգլերեն) իմացության մակարդակի բարձրացման նպատակով վերապատրաստման վերաբերյալ.

2.6. ակտիվացնել միջազգայնացման գործընթացներում ՀՊՏՀ մասնաճյուղերի և քոլեջի ներգրավման աշխատանքները.

2.7. հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.02.2016 թ. հ. 238-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայում և հայցորդության ձևակերպման կարգի» 47-րդ կետի դրույթը՝ ներկայացնել առաջարկություններ. ա) արտաբյուջետային միջոցների հաշվին արտասահմանցի ասպիրանտի գիտական ղեկավարի աշխատավարձին (յուրաքանչյուր ասպիրանտի հաշվով) հավելավճար սահմանելու վերաբերյալ, բ) նշված դրույթը նաև մագիստրատուրայի արտասահմանցի ուսանողի գիտական ղեկավարի վրա տարածելու վերաբերյալ.

2.8. մինչև 01.09.2016 թ. ընկած ժամանակահատվածում ներկայացնել առաջարկություն ընդհանուր հումանիտար և սոցիալական, ընդհանուր բնագիտական և մաթեմատիկական, մասնագիտական առարկաներն անգլերեն դասավանդելու կարողություն ունեցող և համալսարանի միջազգայնացման գործընթացներում ակտիվորեն ներգրավված պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի աշխատավարձին հավելավճար սահմանելու վերաբերյալ.

2.9. ներկայացնել առաջարկություն 2017 թվականից ՀՊՏՀ բյուջեում արտաբյուջետային միջոցների հաշվին միջազգայնացման ֆինանսավորման և ծախսերի ուղղությունների վերաբերյալ.

2.10. ձեռնարկել միջոցներ միջազգային մրցույթներում և դրամաշնորհներում ՀՊՏՀ մասնակցության ակտիվացման համար, այդ թվում՝ արտասահմանյան բուհերի հետ համատեղ.

2.11. մինչև 01.09.2016 թ. ընկած ժամանակաշրջանում, ՀՊՏՀ միջազգայնացման ռազմավարության հիման վրա, մշակել համալսարանի միջազգային գործունեության ցուցանիշների բարելավման միջոցառումների պլան՝ ըստ բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի և գիտական ուղղությունների:

3. Հանձնարարել պրոռեկտոր **Պ. Ա. Քալանթարյանին**.

3.1. ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման ընթացքում ապահովել դրանց և եվրոպական առաջավոր համալսարանների կրթական ծրագրերի համադրելիությունն ինչպես առարկայացանկի, այնպես էլ առարկաների բովանդակային առումներով.

3.2. ուսումնական պլաններում առաջնորդվել տվյալ առարկայի ուսումնասիրության հիմքերի ստեղծման սկզբունքով. առարկայական ծրագրերի ներածական մասում պարտադիր նշել, թե տվյալ առարկան ուսումնասիրելու համար ինչ առարկաներ պետք է ուսումնասիրած լինի ուսանողը, հետևել դրա կատարմանը.

3.3. նախապատրաստել առաջարկություններ իրականացվող կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման և հավաստագրման վերաբերյալ.

3.4. մինչև 01.09.2016 թ. ընկած ժամանակաշրջանում, ՀՊՏՀ միջազգայնացման ռազմավարության հիման վրա, մշակել համալսարանի միջազգային գործունեության ցուցանիշների բարելավման միջոցառումների պլան՝ ըստ բարձրագույն կրթության 1-ին և 2-րդ աստիճանների:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր **Գ. Ի. Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

04.05.2016 թ.